ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի իրավաբանական և վերահսկողության վարչության պետ (ծածկագիր՝ 30/2-2.1-4)

Իրականացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված ջրային համակարգերի օգտագործման և պահպանության գլխավոր պետական տեսուչի տեղակալի պարտականությունները: Համակարգում է Կոմիտե ներկայացվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնելը: Համակարգում է ՀՀ կառավարության նիստի օրակարգում ընդգրկված նախագծերի վերաբերյալ Վարչության կողմից Կոմիտեի նախագահին առաջարկություններ ներկայացնելը: Կոմիտեի իրավասությունների շրջանակներում ապահովում է հսկողություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով սահմանված իրավախախտումները հայտնաբերելու և կանխելու նպատակով: Ապահովում է հսկողություն ջրային համակարգերի օգտագործման և պահպանության նկատմամբ, ինչպես նաև Կոմիտեի աշխատակազմի հաշվեկշռում գտնվող՝ ընկերություններին կամ այլ կազմակերպություններին հանձնված գույքի տեխնիկական վիճակի և պահպանության նկատմամբ: Ապահովում է Կոմիտեի և Աշխատակազմի ստորաբաժանումների գործունեության ընթացքում նախապատրաստվող, իրավական բնույթ ունեցող փաստաթղթերի նախագծերի՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանությունը, ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ (պայմանագրեր, իրավական ակտերի նախագծեր) տալիս է իրավական-փորձագիտական եզրակացություններ և առաջարկություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն՝ իրավագիտություն մասնագիտությամբ կամ տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով,

* քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ ՀՀ համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա

ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում,

* տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
* համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
* անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,

* անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնների անձնագրերով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում (Ցանկեր N 1, 2):

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 16.1 ենթակետին հաջորդող 1-ին պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

* ռուսերենի ազատ տիրապետում:

***
Դիմող ՀՀ քաղաքացիները ՔԾ խորհուրդ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
* դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
* տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
*մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
*անձնագրի պատճենը:
ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 930-ից մինչև 1230-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 10.02.2016թ.:

Մրցույթներին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններս տանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համարկ արող են դիմել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմ (ք. Երևան, Տերյան 89, հեռ. (011) 54-11-38, (011) 56-64-62) կամ այցելել Խորհրդի պաշտոնական ինտերնետային կայք էջ՝ www.cscouncil.am:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթներին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները չեն վերադարձվում:

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 16.1 ենթակետին հաջորդող 1-ին պարբերությունը),
* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
* ռուսերենի ազատ տիրապետում:

Մրցույթը կկայանա 16.03.2016թ.՝ ժամը 10:30-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):